ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք.Եղեգնաձոր

N 73 <<10>> սեպտեմբերի 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԹԱՌԱԹՈՒՄԲԻ ԵՎ ՌԻՆԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 7-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 140-Ա որոշման պահանջներով

Որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Թառաթումբի և Ռինդի գյուղական համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունները նշանակել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 140-Ա որոշմամբ սահմանված 2014 թվականի դեկտեմբերի 14-ի կիրակի օրը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2.Առաջարկել մարզի նորընտիր տեղական ինքնակառավարման մարմիններին՝ լիազորությունները ստանձնել սույն որոշման հավելվածում սահմանված ժամկետներում :

3.Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությանը ընտրությունից հետո ընդունված որոշման մասին ծանուցել համայնքի նորընտիր տեղական ինքնակառավարման մարմիններին:

4.Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության վրա :

5.Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

Է.ՂԱԶԱՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2014 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 73 որոշման

ՀՀ Վայոց ձորի մարզի Թառաթումբի և Ռինդի գյուղական համայնքներում 2014 թվականի դեկտեմբերի 14-ին տեղական ինքնակառավարման մարմինների կայանալիք ընտրությունների վերաբերյալ

հհ	Համայնքի անվանումը	Ընտրողների թիվը	ՏԻՄ-երի լիազորությունների ստանձման ժամկետները	
			Համայնքի ղեկավար	Համայնքի ավագանի
1	Թառաթումբ	396	06.04.2015թ.	Ընտրություն չկա
2	Ռինդ	1191	06.02.2015թ.	Ընտրություն չկա

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ